

գերորդ դարը հայերը ունէին իրենց գիրն ու գիրքը:

Գրիգոր Լուսաւորիչ, հնի եւ նորի մէջ ամէն կամուրջ քանդած ըլլալու հաշուով, կարգադրեց որ մեհեաններու մէջ պահուած գրականութիւնը վառեն: Եւ ասկէ այն անգնահատելի կորուստը, որուն պատճառ եղաւ նոր հաւատքի ճրագը վառելու ցանկութիւնով մոլեղնած Լուսաւորիչը\*):

Զարմանալի է որ մեր «գրերի գիւտ» կոչած թուականէն երեք հարիւր տարի առաջ հայ երկրի մէկ ծայրէն միւսը ճամբորդած Ստրապոն, որ այնքան մանրամասն կը խօսի հայերու մասին, չի յիշատակեր թէ հայերը գիր ու գրականութիւն չունէին: Եթէ իրողութիւնը այդպէս ըլլար, Ստրապոն չէր կրնար աչքէ վրիպեցնել այդպիսի ազազակող պակասը: Այս ցոյց կուտայ, թէ, Մեսրոպ չէ որ հնարեր է «անգիր հայերու» համար տառերը\* (Մեսրոպեան անունով նուիրագործուած հայ տառերը, իմա երկաթագիրը, գործածուած է մինչեւ 9-րդ դարու վերջերը եւ 10-րդ դարու ընթացքին քիչ մը փոփոխուած է ձեւով ու հասակով: 11-րդ դարու վերջերը հնարուած են մեր գործածած բոլորագիր տառերը: Մնացած ձեւերը բոլորն ալ 19-րդ դարուն հնարուած են):

Չորս հարիւրական թուականներու սկիզբը յանկարծ մեր երկրի մէջ շքեղ գրականութեան մը գոյութիւնը կը ստիպէ ինձ հաւատալու, որ, մտաւոր զարգացումի այդ աստիճանին հասած երկիրը մշակոյթի երկար տարիներու կեանք մը ապրած էր: Մենք գիտենք, որ մինչեւ որ երախային ծնօտը մազոտի, քսան տարի կ'անցնի: Ինական օրէնք է, որ յառաջդիմութեան մէջ ոստում չկայ:

Այն անբազդատելի կատարելութիւնը լեզուական հարուստ գեղեցկութեան, որ է հայերէնի թարգմանած Սբ. Գիրքը, ինքնին վկայա-

գիր է որ հայերը ունեցեր են, շատ հնուց ի վեր, գիր, գիրք եւ մշակոյթ: Այդ ծանրակշիռ գործը գլուխ հանելու համար Սահակ եւ Մեսրոպ կազմեցին հարիւր հոգինոց հմուտ ուսումնականներու կաճառ մը, որ այսօր իսկ ամենէն քաղաքակիրթ ազգին ալ պատիւ կը բերէր: Կը նշանակէ որ հայերը անգիր չէին, այլ ունէին ուսումնականներ, հարիւր հոգինոց կաճառ եւայլն:

Սորենացին «անթիւ գրուցաց մատեանք»ի մը խօսք կ'ընէ: Մեր պատմահօր լրջութիւնը գնահատող սեւէ անհատ չի կրնար տարակուսիլ, որ ան կարգացած չըլլայ այդ մատեանները: Եթէ անոնք անթիւ ալ չէին, դէ՞՞ եղածներու մէջ՝ անհնարին էր որ սեւէ տեղ արձանագրուած չըլլար, թէ, հայերը անգիր ժողովուրդէն էին:

Հինգերորդ դարու սկիզբները արդէն հարիւր տարի է, որ քրիստոնէութիւնը յեղաշրջած է մեր ժողովուրդը եւ քանդած հին ըմբռնողութիւնները: Եկեղեցիին մէջ յանուն Յիսուսի ողջագուրուող մարդկանց մէջ այլ եւս չկան «անջրպետներ»: Նոր կրօնը այնքան զօրեղ է, որ այլեւս անյետաձգելի պահանջ է մայրենի լեզուով կարդալ եւ լսել բոլոր ինչ որ «խօսք ընդ Աստուծոյ» էր: Քրմերու մենաշրնորհ եղող գիրն ու գրականութիւնը պէտք էր որ ժողովուրդին մատչելի դառնար: Եւ Սահակ-Մեսրոպ կազմաւորեցին մեր գիրերը:

Հին մեհնադրոյմները հաւանաբար ունէին թերութիւններ, եւ կը թուի թէ կարելի չէր անոնցմով յունական կիստուկ եւ թլուստ արտասանութիւնները ըստ արժանւոյն արտաբերել:

Ղազար Փարպեցի, գրերու գիւտի մասին խօսած ատեն, կը յայտնէ թէ եկեղեցիի մէջ յունարէն եւ ասորերէն արտասանուած «Աստուծոյ խօսքը» ոչ ոք չէր հասկնար, եւ հրամայական պահանջ էր դարձեր, սեփական մայրենի լեզուով լսել այդ խօսքը:

Անտարակոյս մինչեւ Սահակ-Մեսրոպը՝ շատ մը ուրիշ Սահակներ եւ Մեսրոպներ նկատի առած էին հայ այբուբենը ամէն տեսակ հնչումներով հարստացնելու խնդիրը: Մեծ գործը, սակայն, յաջողցնողները եղան Սահակ-Մեսրոպ, եւ ասոր համար ալ հայ ժողո-

\*) Հայեր Ս. Գրիգորը կ'անուանեն «Լուսաւորիչ հոգւոց» հաւատքով եւ լոյսով, Ս. Ներսէսը «Լուսաւորիչ բարոյականութեան» լոյսով, իսկ Ս. Սահակը «Լուսաւորիչ մտաց», դպրութեան լոյսով:

Այս հարցով հետաքրքրուողներ կ'ընդունին որ Մեսրոպ հնարեր է ընդ ամէնը 14 տառ՝ ձայնաւորներ եւ լծորդներ: